ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 06 >> դեկտեմբեր 2018թ. N 164

ք. Արմավիր

Աշխատանքային խումբ ստեղծելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1793-Ն որոշման 3-րդ կետի <<ա>> ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կանոնադրության 15-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2018 թվականի նոյեմբերի 30-ի N 400-Ա որոշումը <<Վաղարշապատի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերությունում ընդունման - հանձնման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ (Հ. Հարությունյանին) սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 5 աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության մարզպետին:
3. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ (Հ. Հարությունյանին) սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել <<Վաղարշապատի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերության նախկին տնօրենի պաշտոնակատար՝ Արտակ Իսախանյանին և տնօրեն Գոռ Ասատրյանին և ընկերության գլխավոր հաշվապահ՝ Արտակ Միրզոյանին (համաձայնությամբ):
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը: Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Ղուկասյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Մարզպետ՝ ***Հ. Մաթևոսյան***

Недействительная подпись

VERIFIED OCSP 06.12.2018 13:14:21 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2018 թվականի դեկտեմբերի 06-ի
N 164 կարգադրության

Աշխատանքային խումբ

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Հ. Հարությունյան ---- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Անդամներ՝

Ջ. Եղոյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսատնտեսական և սոցիալ-տնտեսական վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ

Ա. Մուրադյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար

Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ **Վ. Վարդազարյան**

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 05.12.2018 11:53:53 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217